Կիրակի 27 դեկտ. № 233 | ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ | 1915 Թ. | ВТОРОЙ ГОДЪ | Воскресенье 27 декабря № 233

ԱՐԵՒ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

„АРЕВЪ“ („Солнце“) Литературно-общественная и политическая ежедневная газета

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Տարեկան	7 ր. — կ.
Տաս ամիսը	6 ր. — կ.
Ութ ամիսը	5 ր. — կ.
Վեց ամիսը	4 ր. — կ.
Երեք ամիսը	2 ր. 50 կ.
Ամսական	1 ր. — կ.

ԵՒՐՈՊԱ

Տարեկան	25 ֆրան.
Կէս տարուանը	15 »

ԹԻՒՐՔԻԱ

Տարեկան	110 ղրուշ
Կէս տարուանը	60 »

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Տարեկան	9 ր. — կ.
Կէս տարուանը	5 ր. — կ.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կ. մարկա։

Հեռախօս № 37-04.

Առանձին համարը ամեն տեղը 5 կ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Առաջ. եր. վրայ պետիտի տողը	25 կ.
Վերջին » »	15 կ.
Կովկասից դուրս »	30 կ.
Վերջին երեսում »	20 կ.

Խմբագրութիւնը և գրասենեակը՝ Баку, Большая-Морская 30։ Արտասահմանից՝ Bakou, Rédaction «Arev».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան ժամը 9—2, կէսօրից յետոյ՝ 5—7։

Թղթակցութիւնները և յօդուածները պէտք է գրել թերթի մէկ երեսի վրայ, պարզ և ընթեռնելի։ Կարիք զգացուած դէպքում խմբագրութիւնս յօդուածները և թղթակցութիւնները կրճատում և ուղղում է։

Адресъ, редакціи армянской ежедневной газеты „АРЕВЪ“, Большая-Морская, 3[illegible]. Телефонъ № 37-04.

„ԱՐԵՒ“-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

խնդրում է 1915 թուի այն բաժանորդներին, որոնք կըկամենային 1916 թ. ընթացքում եւս „Արեւ“ ստանալ, շտապեն յայտնելու թերթիս գրասենեակին մինչեւ 1916 թ. յունուարի 1-ը, որպէսզի թերթի առաքումը չընդհատուի։

4—4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ ԱՆԳԼԻԱՆ

III

Ձենք կարող ասել, թէ ինչ աստիճան գործնական նշանակութիւն կունենայ Բրայսի տեսակէտը հայկական պետութեան մասին։ Տարաբախտաբար վերջին կէս տարուայ դառն դէպքերը այնպիսի ուժեղ հարուած են հասցրել մեր ժողովրդին, որ մենք այլեւս չենք կարող այդպիսի երազներով ոգևորուել։ Թող թէ, հայերը այդ տեսակէտից եղել են միշտ աւելի զգոյշ և աւելի շրջահայեաց, քան ուրիշները, որոնք յաճախ դժուարին և անիրական բանի են ձգտում։ Մեր ձգտումները եղել են աւելի քան բանաւոր, և մեր ազգային երազները երբէք էլ ուտոպիայի չեն վերածուել։ Անկախ Հայաստանի իդէալը մենք չենք ունեցել ազգովին։ Կարող է պատահել, որ այս կամ այն հայը, վառուած բուռն, անվերապահ հայրենասիրութեամբ, մոռացած լինէր մեր իրական պայմանները և ձգտած լինէր անկախ պետութեան—բայց մեր քաղաքական հոսանքները, մեր կուսակցութիւններից ոչ մէկը այդպիսի ծրագիր չի ունեցել։ Ամենաշատը, որ մենք երազել ենք, ամենահեռաւորը, որին մենք կառչել ենք—եղել է Հայաստանի ինքնավարութիւնը թիւրք պետու-

---

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹ. ԴԱՀԼԻՃՈՒՄ

Վաղը, դեկտ. 28-ին, յօգուտ հայ գաղթականականդ պրոցի, նախաձեռնութեամբ մի խումբ ուսուցիչ-ուսուցչուհիների և բարեհաճ մասնակցութեամբ

տիկին ՄԱՑՍՈՒՐԵԱՆԻ,

Պ. ԱՄԻՐԱԳՕԻ, ջութակահար **ԽՈՐՈԶԵԱՆԻ**, տեղիս դերասանական խմբի և ուրիշների, կը կայանայ

ԵՐԵԿՈՅԹ

ՄԻ ԲԱԺԱԿ ԹԷՅ

Սկիզբը երեկոյեան ժ. 8 և կէսին։ Ցատուկ հրաւէրներ չեն լինի։

թեան դերիշխանութեան տակ։ Օսմանեան վարիչների դէմ հայը անջատական տրամադրութիւններ ցոյց չէ տուել երբէք։ Չխօսենք այս պատերազմի ժամանակ ծագած տրամադրութեան, Վանի ապստամբական կռիւների և հայ կամաւորական շարժման մասին, որ մեր խորին համոզմունքով հետեւանք են եղել Թիւրք պետութեան վատագոյն ռէժիմի։ Եթէ անաչառ հայեացքով քննելու լինենք փաստերը, մինչև իսկ այդ բոլոր շարժումների մէջ ինքնապաշտպանութիւնից բացի ոչինչ չենք գտնի։ Հայ ժողովուրդն իրաւունք ունէր իր գոյութիւնը պաշտպանելու համար միջոցներ ձեռնարկել, մինչև անգամ, այո, ապստամբութեան դիմել, ինչպէս շատերը որակում են Վանի ինքնապաշտպանութիւնը։ Բայց ոչ այդ միջոցները և ոչ այդ ապստամբութիւնը մեր վճռորոշը չեն։ Մենք կամեցել ենք ապրել Թիւրք պետութեան մէջ իբրև խաղաղ ու հաւատար քաղաքացիներ։ Մենք կամեցել ենք, որ հայութեան վրայից վերանայ վերջապէս վանդալական սուրը։ Մենք ինքներս երազել ենք Թիւրքիայի վերածնունդը ազատութեան ու հաւասարութեան հիմունքների վրայ։ Բայց մեր երազները միշտ էլ զարնուել են սկզբում հին Թիւրքերի, ապա Երիտասարդ-Թիւրքերի այլամերժ ու հայախեղդ ոգուն։

Այսպէս է եղել մեր պատմութիւնը մինչև իսկ այն ժամին, երբ պայթեց համաշխարհային պատերազմը։ Ապագայում, երբ գրուի այս ծանր օրերի պատմութիւնը և երբ երեւան գայ հայերի տրամադրութիւնն ու դերը խաղաղական կերպարանքով — ընթերցող աշխարհը կըտեսնէ, որ հայերը ամէն կերպ հակառակ են եղել Թրքական պատերազմին, որ այդ պատերազմը չեն ցանկացել նրանք։ Բայց հզօրների կամքով ու ճիգով մեր երկիրը ևս ընկաւ պատերազմի մեծ ջրապտոյտի մէջ և մենք էլ գնացինք պատերազմող ազգերի հետ։

Ծանր դէպքերն այնուհետև կրակի մատնեցին մեր հայրենիքը, և մենք տուինք այս պատերազմի համար այնքան զոհ, որչափ չեն տուել մինչև իսկ Բելգիան, Սերբիան և Լեհաստանը։ Այժմ Անգլիայի քաղաքական գործիչներից մէկը — մի յայտնի հայասէր — պահանջում է, որ մեր զոհերի փոխարէն մեզ տրուի ազատ պետութիւն «Փոքր-Ասիայի կենտրոնում»։ Չգիտենք, ինչ են մտածում այս մասին եւրոպական մեծ պետութիւնները, ինչ են մտածում յատկապէս Անգլիան և Ֆրանսիան։ Գիտենք այսքանը միայն, որ իբրև «փոխարինութիւն» մեր զոհերի ու տառապանքների — ոչ ոք մեզ ոչինչ չի տայ։ Ճիշտ է այն, որ հայերը «պետական ընդունակութիւններ» ունեն, որ հնուց քաղաքակիրթ ժողովուրդ են, որ Ասիայի և Եւրոպայի միացման կէտում նրանք կարող են քաղաքական կարևոր դեր կատարել և որ Եւրոպայի խաղաղութեան ու քաղաքակրթութեան լաւագոյն աշխատաւորները կլինեն։ Բայց այս բոլորը այն ժամանակ և այն պայմանով, եթէ փրկուեն նրանք այս պատերազմի զարհուրելի հարուածներից։ Թիւրքիայի վերջին զարկը մինչև հիմա էլ խեղդում է հայերին, և մենք չգիտենք թէ ինչպէս պիտի կարողանանք ամոքել, մեղմել ճակատագրի այդ դաժան հարուածը։

Մեր ազգային աղէտի մէջ, մեր դժբախտութեան անհուր ժամին, մեծանուն գործիչների այս հայասիրական մտքերն ու առաջարկները — եթէ գործնականապէս շատ բան չեն տալիս մեզ — դէթ սփոփում են բարոյապէս, դէթ խրախուսում են այս տառապած ժողովրդին։ Մենք պայքարել ենք ազատ ու հաւասար վիճակի համար, պայքարել ենք ոչ թէ միայն հայերի, այլև միւս ազգերի, այլ և — ինչպէս արդէն եւրոպացիք են խոստովանում — քաղաքակրթութեան դատի համար։ Այդ ազնիւ պայքարի մէջ մենք կորցրինք շատ բան, բայց մենք չենք յուսահատուի ու կը շարունակենք մեր քաղաքակրթական դերը։ Կը շարունակենք այնքան ժամանակ, որքան ժամանակ հայութիւն է ապրում աշխարհիս երեսին, որքան ժամանակ հնչում է մեր լեզուն ու մեր պատմութիւնը։ Կը շարունակենք, քանի որ մեր գոյութեան իմաստը մենք ուրիշ տեղ չենք գտել մինչև հիմա, և մենք ապրել ենք ամենից առաջ իբրև բարոյական գոյութիւն։

Հայերս պէտք է ամէն ոյժ թափենք մեր ժողովրդի մնացորդները պահպանելու, պէտք է ամէն ինչ զոհաբերենք, որպէսզի մնայ ու ապրի մի կենդանի հայութիւն։

Եւ երբ այդպէս լինի, այն ժամանակ կիրականանայ իրօք մեր ինքնավար երկրի երազը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՐԱԳԵԴԻԱՆ

Վիլեամսի յօդուածը «Contemporary Review» թերթում։

Քաղաքակիրթ աշխարհը սոսկում ընկալով հայկական նոր ջարդերի մասին, որ կատարուեց աւելի սառնասիրտ կերպով, աւելի լաւ կազմակերպուած ու աւելի մեծ չափերով, քան նախորդ ջարդերը՝ սկսած Լէնկ-Թիմուրի օրերից։

Փաստերն ստուգուած են փախստականների վկայութեամբ, որոնք իրենք են եղել զոհերը, կամ ականատեսները, Թիւրքիայից արտաքսուած կամ փախած ստորահպատակների տեղեկութիւններով, Տրապիզոնի իտալական հիւպատոսի ժամանակին ու սոսկալի զեկուցագրով և նոյնիսկ գերմանական միսիոներների և գթութեան քոյրերի բողոքով։

Ջարդը կատարուել է խիստ սիստեմով, և նրանում, արդարացի թէ անարդար, մեղադրում են գերմանական հիւպատոսներին։ Բոլոր այն վայրերում, ուր հայեր են ապրում, Պոլսից հրաման է ստացուել տարագրել նրանց դէպի անապատները կամ անառողջ վայրերը։ Զինուորացու հայերի մեծ մասն արդէն զէնքի տակ էր վերցուած, իսկ մնացեալներին ձերբակալում ու գնդակահարում են։ Տիրերին, կանանց ու երեխաներին մի քանի ժամ միայն ժամանակ տալիս՝ պատրաստուելու հեռու ճամբորդութեան համար և քշում են նրանց խմբերով, որոնցից շատերը մեռնում են կիսաճամբին՝ հարուածներից ու քաղցից։

Շատերին ազատ արձակուած ոճրագործներն ու զինուորները, քրդերն ու աւազակներն են կոտորում և կողոպտում։ Քաղաքներում ջահել կանանց ու երեխաներին վաճառում են Թիւրքերին։ Զինուորներին իրաւունք է տրւում ճանապարհին կանանց հետ վարուել, ինչպէս ցանկանում են, և, որ աւելի սոսկալին է, շատ դէպքերում մանչ ու աղջիկներին ծախում են պոռնկանոցների համար։ Տրապիզոնում 8—10,000 մարդու մակոյկներն են լցնում և ջրախեղդ անում։ Դէպքեր են եղել, որ կանայք ծծկեր մանուկները գրկած՝ Եփրատն են նետուել, մարդկային գազանութիւնից ազատուելու համար։

Անկարելի է պարզել ոչ կոտորուածների, ոչ աքսորուածների և ոչ մահմեդականացած հայերի ստոյգ թիւը։

Ենթադրում են, որ Թիւրքիայում 1,500,000-ից մինչև 2,000,000 հայեր էին ապրում։

Դրանցից 200,000-ը Պոլսում էին ապրում, և նրանք համեմատաբար աւելի քիչ են տուժում։

Մի հաշուով իրենց բոյներից արտաքսուած են 800,000, որոնցից հազիւ ⅓-ը տեղ են հասնում։ Սակայն ֆրանսիական պաշտօնական հաղորդագրութիւնն ասում է, որ 800,000 հայ են կոտորել։

Շատ քչերին յաջողւում է զէնք վերցնել և սարը բարձրանալ, և նրանք հաւանօրէն դեռ կռւում են լեռներում։

Իւրաքանչիւր օր մեզ մօտեցնում է այն ժամկէտին, երբ Թիւրքիայում խապառ կըջնջուի հայ տարրը։

Եւրոպան շատ է պարտական հայերին, որոնք իրենց կրծքով դէմ էին կանգնած ասիական հորդաներին։

Այժմ նրանք միջնորդներն են արեւմտեան քաղաքակրթութեան և արեւելեան ժողովուրդների միջև։ Ահա թէ ինչու կարևոր է այդպիսի ժողովուրդը փրկելը կորուստից։

Սոսկալի է, որ Գերմանիան, եթէ նոյնիսկ ինքը չէր այդ կոտորածները սարքողը և նրանց մասնակիցը, գոնէ սառնարիւն մնաց և չբռնեց Թիւրքերի ձեռքը։

Բայց միւս մեծ պետութիւններն էլ իրենց բաժին յանցանքն ունին այդ սարսափի մէջ։

35 տարի առաջ Ռուսաստանը Թիւրքա-Հայաստանի մեծ մասը գրաւեց և Սան-Ստեֆանոյի դաշնագրով իրաւունք ստացաւ պահելու այդ երկիրները մինչև բարենորոգում մտցնելը։ Անգլիան խափանեց այդ ջանքերը։ Մի ժամանակ կար, որ կարծում էին, թէ Ռուսաստանը զինուորական խնամակալութիւններ է առաջ բերում Հայաստանում՝ նոյնիսկ առանց հայերի նրան միացնելու նպատակով։ Այդ շրջանն անցաւ և հրապարակ եկաւ Գերմանիան (1895 թւի մեծ կոտորածներից յետոյ) խանգարելու Անգլիային և Ռուսաստանին հայկական բարենորոգումների խնդրում։ Բանակցութիւնները ձգձգուեցին մինչև ներկայ պատերազմը և ոչ մի արգիւնքի չյանգեցին։

(Կը շարունակուի)

ՊԱՐՈՆ «ՔՆՆԱԴԱՏՆԵՐԸ»

II

Այսպէս թէ այնպէս՝ «քննադատութեան» է դրուած հայ ուսանողութիւնը, որի մասին «համարձակ» ու առանց վերապահումների յայտարարուած է, որ նա... «Երէկ առաջադիմական էր, այսօր ըէակցիօնական»։ *)

Նկատեցէք, որ այդ առաջադիմական «երէկը» ուսանողութեան պատմութեան 80-ական թուականներից այս կողմը չի անցնում։ Այդպէս է ասում, գոնէ, այն պարզ, անհերքելի բացատրութիւնը, որ տրուած է այդ առիթով — «եթէ համեմատենք այն գործունէութեան և ուղղութեան հետ, որ ունէր 60-ական, 70-ական և նոյնիսկ 80-ական թուականների ուսանողութիւնը», ապա պիտի ասել, որ նա «այսօր ըէակցիօնական է»։

Եւ... նոյնիսկ 80-ական թուականների ուսանողութիւնը։

Դասական, զարմանալի մեծահոգութիւն...

Չէ՞ որ սա նշանակում է՝ հայ ուսանողական պատմութեան առաջադիմական շրջանը բերել-հասցնել անգամ 80-ական թուականները, իսկ այնուհետև...

— Այնուհետև՝ 90-ական և մնացած թուականների ուսանողութիւնն անտրամաբար ընկնում է։ Նախ՝ գուցէ դադարում է լինել գաղափարական, յետոյ՝ առաջադիմական, իսկ «այսօր ըէակցիօնական է» արդէն։

Այդքան անպատասխանատու քննադատութիւն ու այդքան անհեթեթ կարծիք 90-ական ու մօտակայ թուականների ուսանողութեան նկատմամբ — բարբարոսաբար, անկարելի է դարձնում որևէ լուրջ բացատրութիւն այդ առիթով։

Ո՞վ չգիտէ, որ այդ շրջանի ուսանողութիւնն է պարտական հայ կեանքը իր փայլուն, պայծառ յղացումներով։

Ո՞վ չգիտէ, որ Նալբանդեանի ու Րաֆֆու սքանչելի երազները մեր անհրապոյր երկնքի տակ իրականութիւն են առնում այդ թուականների ուսանողութեան ջանքերով միայն։

Ինքնաճանաչ ու գիտակից ժողովուրդների մէջ նման թուականները հպարտութեան ու ոգեւորութեան աղբիւր են ծառայում, իսկ պարտաճանաչ սերունդների համար՝ նման նախորդները պաշտամունքի ու երախտագիտութեան առարկայ են դառնում...

Իսկ մեզ մօտ։

— Մեզ մօտ էլ նոյնն է, բարբարոսաբար։ Այլապէս արժէր արդեօք ապրել, պայքարել ու կուրծք դէմ տալ այսքան անհաւասար հարուածների առաջ։

— Երբէք։

Թող պարապ մարդիկ իրենց գործը շարունակեն որքան կուզեն և ինչպէս կուզեն—դա մեզ չի յուսահատեցնի, մենք լաւ գիտենք նրանց խօսքի արժէքը...

Շարունակենք սակայն։

Այսպիսով՝ մեր «քննադատների» կարծիքը ներկայ հայ ուսանողութեան մասին շատ պարզ է, որոշ և հաստատ. — «Երէկ նա առաջադիմական էր, այսօր ըէակցիօնական»...

Ճիշտ է, ժամանակակից ուսանողութեան մասին կարելի է տարբեր կարծիք ունենալ։ Կարելի է տարբեր պահանջներ ու տարբեր սպասելիքներ ունենալ նրանից։ Բայց որ այդքան անվերապահ կերպով անկարելի և ամբողջ հայ ուսանողութիւնը ըէակցիօնական յայտարարել—այդ ևս ճիշդ է անպայման։

Նկատեցէք, մանաւանդ, որ այս հրապարակային «քննադատութիւնը» վերաբերում է հայ ուսանողութեանը ամբողջութեամբ, ընդհանրապէս, ու բովանդակ պարզապէս ասուած է, որ «խօսքը բացառութիւնների մասին չէ»։

Այսպէս է, գոնէ, յայտարարում «քննադատութեան» անաչառ միտքը...

Ուսանողութիւնն Ռուսաստանում երբէք յետադիմական չի եղել։ Ուսանողութեանը թերևս շատ բանում կարելի լինի մեղադրել։ Նրան կարելի է մեղադրել անգործութեան մէջ, նրան կարելի է մեղադրել բարձր տրամադրութիւնից զուրկ լինելու մէջ, կարելի է ուսանողութեանը ի ցոյց դնել նրա անկազմակերպ վիճակը...

Բայց որ հնարաւոր լինի ուսանողութեանն ամբողջութեամբ յետադիմական յայտարարել—դա արդէն շատ տարօրինակ մեղադրանք է ու միանգամայն անհասկանալի։

«Ըէակցիօնական» գաղափարը ենթադրել է տալիս ոչ թէ անգործութեան մատնուած ու պարապ մարդ, այլ մի գործ, մի աշխատանք, որ հրապարակի վրայ է և որ կատարւում է անպայման որոշ ուղղութեամբ ու որոշ նպատակի համար։

Ուսանողութիւնն Ռուսաստանում ի պատիւ նրա երբէք չի մեղադրուել այդ ուղղութեամբ։

— Երբէք և ոչ մի ժամանակ...

Անցեալ անգամ մենք առիթ ունեցանք կանգ առնել ամենակոպիտ կոնսակցութիւնների այն արշաւանքի վրայ, որ նրանք տանում էին ուսանողութեան դէմ։ Այդ բոլորը կատարւում էր—յանկարծ դէպս—ոչ թէ նրա համար, որ ուսանողութիւնը յետադիմական էր, «ըէակցիօնական»...

Հայ ուսանողութիւնը, բարեբաղդաբար, նոյնպէս առիթ չէ տուել նման մեղադրանքների...

Զարէ

*) Ընդգծումը մերն է։ Զ.

ԹԵՐԹՕՆ

ՋՐԵՐԻ ՎՐԱՅ

Դժուար է սահում նաւակն իմ այս հին
Ջրերի յուզուած անդունդի վրայ.
Չեմ կարող հսկել շարժումը նրա
Եւ ոչ էլ նայել այս ճանապարհին։
Օտար, աւազոտ ափերը սրտիս
Ժպտում էին դուրս, վայրի և օտար.
— Նաւակս անհաճ հեռուներն տար
Եւ մարիր սիրոյ ժպիտը շուրթիս։
Ծածկիր իմ առաջ սար, քար ու եզերք,
Յանձնիր ինձ այսօր ջրերի ահին.

Պատրաստ եմ փարել յուզալից մահին
Ու սիրտս անել անջատումի երգ...
Պտոյտ է գալիս, ճօճւում աներկիւղ
Նաւակս յուզուած ջրերի վրայ.
Այս մութերի մէջ ինչքան կայ երկիւղ,
Ինչքան վհատութիւն և խնդութիւն կայ...

Խորէն Լորենց

ԿԱՐՕՏԻ ՑՈՒՑԵՐ

IV

ԿՈԿՈՆ

— Փոխիր այդ զգեստդ, հոգեակ. դու արդէն խմնում ես քո սրունքներից...

Այսօր փողոցում տեսայ մի մանկամարդ աղջիկ. իր կարճ զգեստից ներքև գծագրւում էին հասունացող սրունքները։

Երբ աչքն ընկաւ իմ հայեացքին— շիկնեց, նայեց ներքև։

Ու յիշեցի քեզ։

Գարնանամուտի առաջին օրն էր. ասուների մէջ, թմբերի տակ տակաւին դողունի ձիւներ էին մնացել, բայց դաշտն արդէն սկսել և ուռիները կոկոնել էին։

Մատղաշ ծիլերը երկչոտ աչքի պէս շողին էին տալիս տերևի տակ, փխրուն հողերի արանքից։ Թաց արտերից բարակ ծուխի պէս բարձրանում էր գոլորշին։

Տակաւին ցուրտ էր օդի մէջ, ու սարեակը չէր վերադարձել.— Յիշո՞ւմ ես, իմ անգին, այդ օրը։

Առաջին անգամ դու երկիւղով էիր նստում ու ես քո վարպետն էի։ Չնայած մեր Դինոցն խելօք էր, բայց ես միշտ քայլում էի քո մօտով։

Ու մերթ աչքս ընկնում էր թամբից կախուած քո սրունքներին։

Դու խայտում էիր, շիկնում։

Իմ մաքով մի լուռ ծփծող էր անցնում։ Սարեակը դեռ չէր եկել, բայց կարծես թէ զգում էի հեռուից նրա մօտեցող թռիչքը։

Ես գիտէի, որ ահա այս ձորերի վրայ նրանք շուտով կարձակեն իրենց ղողանջները և բոյ կանեն սիրոյ առաջին հանդիսարանը։

Երբ անցնում էինք ուռենու տակով, դու հանաքով պոկեցիր մի ճիւղ։

Տերևներ չկային նրա վրայ ու կեղևը տակաւին չէր կանաչել։ Բայց նա հեշտութեամբ կոտրուեց քո մատների տակ, որովհետև գարունն արդէն հիւթով լցրել, ուռճացրել էր նրան։

Դինոցն ուզեց արագ գնալ, որովհետև դու անփութաբար շարժում էիր ուռենու ճիւղը։ Իսկոյն վախեցար ու սանձը ձիգ տուիր։

Բայց չէիր տեսնում, թէ ինչպէս խաղում էին Դինոցի ոտները և որքան նա ցանկանում էր խայտալ ու սրընթաց արշաւել։

Ափերիդ մէջ զգում էիր ճիւղի վրայ դուրս ընկած բլթակները։ Մի երկուսը նրանցից ուռել ու մօտ էին պայթելու։

— Երկու շաբաթ յետոյ այդտեղից դուրս եկած կըլինէին մի փնջիկ կանաչ տերեւներ, և նրանց մէջ կախուած կըլինէր փափլիկ մանուսը, իմ անգին։

Այդպէս ես բացատրում էի քեզ ու մենք հասել էինք եղեգնուտի բերանը։

Այդ օրը, չգիտեմ ինչու, մենք մոռացել էինք Սիպսէպին, ու չէինք հանաքում նրա հետ։

Երբ մեր ոտները կախած թմբից ներքև, նայում էինք եղեգնուտի վրայ, նա քիչ հեռուն խաղում էր Դինոցի հետ։

Մի փոքրիկ աղբիւր էր բղխում մեր կողքին, և մի քայլ այն կողմը եղեգնուտն էր սկսւում։ Ջրերի երեսը կարծես մշուշ բռնած լինէր. թռչուններ չկային, ու գորտերը չէին արթնացել տակաւին։

Երեւում էր անցեալ տարուայ արդէն չորացած, խուզուած ճիլերի դալուկ տարածութիւնը՝ նիրհած ջրերի վրայ։

Բայց ես քեզ ցոյց տուի գորշութեան տակից փայլող հազիւ նշմարելի կանաչը։ Բոլոր արմատների վրայ արդէն գլուխ էր ցոյց տալիս նոր, երիտասարդ ճիլը։

Մի շաբաթ էլ, և այդ գորշ մնացորդները բոլորն էլ կըլողան արթնացած ջրերի վրայ, իսկ նրանց տեղ ամբողջ եղեգնուտի մակերևոյթը ծածկուած կըլինի մի մատղաշ ու քնքուշ կանաչով։

— Փոխիր այդ զգեստդ, հոգեակ. դու արդէն խմնում ես քո սրունքներից։ Անզգուշութիւնից դիպել էի [illegible] ու ներքև նայել։

Քանի երրորդ անգամն էր, որ այդ օրը տեսնում էի քո շիկնելը, երբ նայում էի ոտներիդ։

Այս զարթնող կանաչը և մանկական կարճ զգեստդ դարձնաձին զարթնումի քաղցր խուտուտներ էին զարթեցնում իմ մէջ։

— Նէրի, ինչպէ՞ս քաղցր ես դու. սրունքներդ ուռճացել ու կոկոնել են, և ձեռքիդ մէջ բռնած ուռենու այս բլթակների պէս բեղմնաւորութիւնից բացուելու մօտ են։ Մօտ ու ախորժ հպիր թեզ կրծքիս և մազերդ թող շոյեն քունքերս։

Սիպսէպը հեռու խաղում էր Դինոցի հետ։ Մեղմակի առի մէջքդ ու համբուրեցի գարնան նրբաշունչ զեփիւռի պէս։

— Յիշո՞ւմ ես այդ, իմ անգին։

Թմբի ծայրից սարի տակ բացուել էր չոր հողը և բարակ խշխշալով թափւում, սուզւում էր աղբիւրի մէջ։

V

ՍԱՐԵԱԿՆԵՐ

Թթենու գագաթին նստած մարի-սարեակից պոկուեց մի փետուր և իջնում էր ցած։

Այդ նրանից էր, որ նա թափահարեց իրան ու յարդարեց փետուրները։

Կուսական քնքուշ համբերանքով նստած էր մարի-սարեակն իր ճիւղին։

Իսկ արուն անհանգիստ ու խանդոտ խաղեր էր յօրինում նրա շուրջը՝ հեռու և մօտիկ ճիւղերի վրայ։

Այժմ նա կանգնած ամենաբարձր ճիւղին՝ ճռուողում էր խոր ոգևորութեան մէջ։ Նրա վզի փետուրները գիգացել ու թևերը կախ ընկած՝ դողում էին մեղկաբար։

Ներքև իջած փետուրը կպել էր անցեալ ամրանից մնացած արևածաղկի չոր ցօղունին։ Նա երերում, իր քընքուշ թելիկները տատանում էին, կարծես թէ մրսում էր։

Իսկ վերևում մարին կտուցը թեքել ու ականջը տուել էր արուի երգին. Նա կծկուած էր, կարծես իր փետուրի նման մրսելիս լինէր և ընկերի երգը շոյում, տաքացնում էր իրեն։

Գարունը նոր էր եկել. ծառերի ճըղները դեռ չոր-չոր ցցուած էին. բըլթակները նոր ճեղքուած և միայն տեղ-տեղ բողբոջներն սկսել էին կանաչին տալ։

Առաջին զոյգ սարեակն էր. առաւօտեան վաղ նստել էին թթենու բարձր գագաթին՝ արևի շողերի մէջ։ Արուն իր երգով կարծես գարուն և ջերմութիւն էր կանչում մարի համար։

Յանկարծ նա լռեց, ուրախ ոստիւններ գործեց ճղների վրայ, մօտեցաւ մարիին, շփեց նրան իր թևը։ Դողդողաց մարին, կտուցը մօտեցրեց։ Իսկ արուն աւելի խանդոտ թռվռում էր նրա շուրջը, գեղգեղում, մօտենում ու շփում էր թևը։

Մի անգամ էլ մարին թափ տուեց իրան ու յարդարեց փետուրները։ Իսկ ներքևում, արևածաղկի ցօղունին դողդողում էր նրա պստրիկ փետուրը։

Յիշո՞ւմ ես այդ, Նէրի։

Մենք նստել էինք բակում, հողաշէն թմբի վրայ կողք-կողքի։

Քո ուսերին գցուած էր բրդեայ նուրբ հիւսակէնը։

Գարունը նոր էր ու դեռ ցուրտ. մարի-սարեակը մրսում էր բարձր ճիւղին։

Մենք երազկոտ աչքերով տեսնում էինք, ինչպէս նրանք իրենց սիրով ջերմանում և վառ երգով գարուն էին կանչում։

Քո մատաղ, թրթռուն մարմինը իմ ուսի ջերմութիւնն էր որոնում։ Այսօրուայ պէս կենդանի կարծես շօշափում եմ ձեռքիս տակ քո իրանի կուսական քնքշութիւնը։ Կարծես երակներովս անցնում է մեր առաջին զգուանքի մատաղ սարսուռը։

Որքան բախտաւոր գարուն էր.

ծառերի բլթակները դեռ նոր էին ճեղքուել, ու ես տեսնում էի քո շուրթերի հիւթեղ քաղցրութիւնը։ Շուտով տերևները դուրս կը գային ճղների վրայ, և ես անհամբեր էի քո թևերի բացուելուն։

Այն ժամանակ մենք էլ մի զոյգ սարեակի պէս մեր սիրոյ վաղ գարունն էինք անում։ Երջանիկ էինք թըթենու վրայ ճռուողող սարեակների սիրով ու մեր սիրտն էլ կարծես մրսում էր՝ սիրոյ առաջին բողբոջների հետ։

Դեռ վաղ գարուն էր։

Թթենին այս եկող գարնան կը բողբոջի՞ արդեօք։ Եւ կը գա՞ն սարեակները նրա բարձր ճիւղերին։ Ա՜խ, յաւէտ թափուր կը լինի մեր հողաշէն թումբը և նրա մօտ էլ չի բարձրանայ արևածաղիկն իր դալար պատկով։

Չէ՞ որ, Նէրի, կործանուած է մեր հայրենիքը և այն տունը հրդեհուած։

Ուղարկիր ինձ քո ուսի նուրբ հիւսակէնը։ Նա միշտ յիշեցնում է ինձ վաղ գարունը։

Եւ տեսնում եմ սարեակների սէրը ծառի կատարին, լսում եմ նրանց խանդոտ ճռուողիւնը և զգում եմ սրտիս մէջ քո առաջին զգուանքի քաղցրութիւնը։

Իմ Նէրի, իմ մարի, կարօտում եմ քո սիրոյ վաղ գարունքին, հայրենի ուրախ, բաղդաւոր գարունքին։

Ինչպէս մի անվերադարձ կորուստ կարծես նրան ես միշտ որոնում եմ չորս կողմս ամէն տեղ։

Ա՜խ, ուր էր գէթ մարի-սարեակի փետուրը լինէր այստեղ։

Նա կը մրսէր, կը դողար ցուրտից, իսկ ես կը գգուէի, կը տաքացնէի նրան իմ Նէրի։

Սէյր

«ՄԻ ԲԱԺԱԿ ԹԷՅԻ» ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹԸ

Բագուի հայ ուսուցիչ-ուսուցչուհիների նախաձեռնութեամբ կազմակերպուող հերթական երեկոյթը տեղի կունենայ վաղը, երկուշաբթի, ամսիս 28-ին, Հայոց Մարդասիրական Ընկ. դահլիճում։

Բագուի հայ հասարակութիւնը, ինտելլիգենցիան չունի մի տեղ, մի հիմնարկութիւն, որտեղ կարողանայ հասարակական կեանք ստեղծել։

Հասարակական ամէն մի գործի յաջողութիւնը պայմանաւորուած է այն հասարակութեան բարեացակամ և նախանձախնդիր տրամադրութիւնից, իսկ այդ ձեռք է բերւում հասարակական տարբեր խաւերի փոխադարձ շփումից։

Ահա այդ բացն է, որ ուսուցիչ-ուսուցչուհիների կազմակերպուած երեկոյթները ո՛րոշ չափով փորձում են ծածկել։

Երկու նախընթաց երեկոյթներն արդարացրին այդ, իսկ ապագան աւելի յուսալի է, որովհետև ամէն կերպ աշխատում են երեկոյթները դարձնել հետաքրքրական։

Այս անգամուայ երեկոյթն ունի հետև. ծրագիր. արտասանում է գերմանուհի տիկ. Մայսուրեանը, երգում է Բագուի հասարակութեան լաւ ծանօթ դերասան Ամիրաղօն, կըկարդայ պ. Ց. Խանդաղեանը։ Պ. Արմէնի ղեկավարութեամբ կըխաղացուի մի վօդևիլ, կընուագեն օր. Կրասիլնիկեան, պ.պ. Աղամեան, Նարաթեան և Խորոզեան. կլինեն նաև ուրիշ մասնակցողներ։

Երեկոյթից գոյացած արդիւնքը յատկացուելու է ամբողջապէս գաղթականական դպրոցի օգտին։

Գ.

ՄԱՄՈՒԼ

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Պ. Ստրուվէն «Бирж. Вѣд.»-ում մի քանի խորհրդածութիւններ է անում գալիք հաշտութեան հաւանական պայմանների և նրանց հետևանքների մասին։

Գտնելով, որ Գերմանիան չէր կարող հրաժարուել իր այն նպատակներից, որոնք մղեցին նրան դէպի պատերազմ և ասելով, որ յետ-Բիսմարկեան Գերմանիան մտնելով Աւստրիայի ու Թիւրքիայի և ստեղծելով նրանց համար վասալական դրութիւն՝ ի հաշիւ իր ընդարձակման, սպառնում էր Ռուսաստանի և Անգլիայի գոյութեան հիմքին—Ստրուվէն իր յօդուածը վերջացնում է հետևեալ տողերով.

«Աւստրո-Հունգարիայի զրկումը մեծ պետութեան դիրքից անհրաժեշտ էր, որովհետև նա մեծ պետութեան դերը միացրել ու թերևս չէր կարող չմիացնել ագրեսիւ Գերմանիայի՝ դէպի Անգլիան և Ռուսաստանն ունեցած թշնամական չափազանց լայն նպատակներին։

Ներկայ պատերազմում Ռուսաստանի և Անգլիայի շահերի միջև տիրում է լիակատար համաձայնութիւն և մինչև վերջն էլ այդպէս պիտի գնայ։ Իզուր չէ, որ պատերազմի ճակատը ձգւում է Ռիգայից մինչև Բաղդադ։

Հաշտութիւնը որոշող խնդիրը Գերմանիայի նկատմամբ շատ պարզ է և միևնոյն ժամանակ մեծապէս նշանակալից։ Նա պէտք է մղի Գերմանիան իր «բնական» սահմանների մէջ և վերջ դնի այդ սահմանների լայնացմանը, որի համար Աւստրիան և Թիւրքիան ծառայեցին որպէս հնազանդ գործիքներ Գերմանիայի համաշխարհային ագրեսիւ քաղաքականութեան ձեռքին։

Ահա իրերի ապագայ դրութեան պարզ հիմունքները Եւրոպայում, որոնցից հրաժարուել չի կարող ռուսական քաղաքական միտքը այնքան, որքանով նա իրան հաշիւ է տալիս, թէ ինչ է պետութիւնների և ժողովուրդների այս մեծ, համաշխարհային մրցութեան իսկական բովանդակութիւնը, կռուի առարկան»։

ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԼՈՒՐՋ ԱՆՑՔԵՐԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

«Р. В.»-ում Օգլինը գրում է.

«Մեր արեւմտեան ճակատի վրայ լուրջ անցքեր են մօտենում, որոնք մօտ ապագայում կարող են ռազմական դրութիւնը փոխել և կռուի նոր պայմաններ ստեղծել հակառակորդ խմբակցութեան համար։ Հաւանական է, որ արմատական փոփոխութիւն կարող է լինել միայն այն ժամանակ, երբ արեւմտեան ճակատի վրայ դաշնակիցները, իսկ հարաւում իտալո-սերբ-չերնոգոր-ֆրանս-անգլիական զօրքերը միաժամանակ ընդհանուր յառաջխաղացումը կսկսեն։ Ամբողջական պատերազմներում յաղթանակի գրաւականը դաշնակիցների առանձին գործողութիւնների ներդաշնակութեան և փոխադարձ օգնութեան մէջ է գտնւում։

Դաշնակից շտաբների ներկայացուցիչների վերջին խորհրդակցութիւնն ապացուցեց ոչ միայն նպատակների միութիւնը, այլև այդ նպատակներին հասնելու միջոցների։

Մենք, անշուշտ, հնարաւորութիւն չունենք պարզելու մեր զօրքերի յառաջխաղացման բնոյթը, հետևաբար և գտնելու, թէ երբ պիտի սկսուի բոլոր դաշնակից զօրքերի ընդհանուր յառաջխաղացումը։

Հարաւ-արեւմտեան ճակատի վրայ մեր զօրքերի մասնաւոր յառաջշարժը ընդհանրապէս յաջող է ընթանում և վերջերս արդէն տուեալներ կան, որ շուտով գլխաւոր ուժերի ճակատամարտը կը սկսուի։

Աւստրո-գերմանացիները, չնայելով իրենց հսկայական ուժերին, ստիպուած են նահանջել։ Այդ նոյն իրողութիւնը, թէև անորոշ կերպով, խոստովանում է նաև աւստրո-գերմանական գլխաւոր շտաբը։

Ըստ երևոյթին՝ գեներալ Բոտմերի բանակը Ստրիպայի վրայ բաւական խոշոր տակտիկական անյաջողութիւն է կրել։

Եղած տեղեկութիւններն այնքան քիչ են, որ դժուար է որոշել մեր զօրքերի գրաւած դիրքերի արժէքը։ Բայց տուեալներ կան, որ Գալիցիայում թշնամու դրութիւնը դժուարին է դառնում»։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՃԱԿԱՏ

Գերագոյն Հրամանատարի շտաբից

(Դեկտ. 25)

Դեկտ. 22-ի երեկոյեան թիւրքերը մառախուղից օգտուելով յարձակում գործեցին Ախա և Բիլդասոր գիւղերի (Թորթում լճի հարաւ-արևելք) շրջանում, որը մենք կասեցրինք մեր կրակով, երբ թշնամին մեր արհեստական արգելարաններին հասաւ և մեծ կորուստներ պատճառելով յետ մղեցինք նրան դէպի իր խրամատները։

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

Թշնամու մի քանի հարիւր հետևակ ու ձիաւորներ Դովլաթաբադ (Համադանից հարաւ-արևելք) քաղաքից փորձեցին յարձակում կատարել Քեամարի գիւղի վրայ, բայց յետ մղուեցին դէպի Քինդելեանի լեռնանցքները։

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆ ԱՒՍՏՐԻԱԿԱՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՃԱԿԱՏ

Գերագոյն Հրամանատարի շտաբից

(Դեկտեմբ. 25)

Ռիգայի շրջանում, Օլայի և Ջալայի մօտ գերմանացիները խեղդող գազեր բաց թողին մեր խրամատների վրայ։ Եակոբշտադտի շրջանում Դուկերնի մօտ մեր 30 խուզարկուներ խիզախ գրոհ տուին իրենց հետապնդած գերմանական ջոկատի վրայ, շատերին կոտորեցին և գերեցին 35 գերմանացի, որոնցից մէկը սպայ է։

Մեր զօրքերը գրաւեցին Զարտորիյսկը և նրանից 2 վերստ արևմուտք գտնուող բարձրութիւնը՝ գերելով 3 սպայ, 376 զինուոր և երկաթաթելերի պաշարը վերցնելով։ Զարտորիյսկից մեզ դուրս մղելու նպատակով արուած թշնամու հակագրոհներն անյաջող անցան։

Չերնովիցի հիւսիս-արևելքում աւստրիացիները խեղդող գազեր բաց թողին և փորձեցին հակայարձակում գործել, բայց մեր զօրքերը յետ մղեցին թշնամուն դէպի իր խրամատները։

Երէկ Շամպայնում զանազան կէտերի վրայ մեր ուղղած կրակը առանձնապէս ուժեղ էր Մէզօն-դէ-Շամպայնի արևմուտքում, ուր մեր գնդակներով ծածկւում էին թշնամու խրամատները։

Բելգիայում մեր հրետանին ռմբակոծեց թշնամու պաշտպանողական աշխատանքները առանձնապէս Ստէէնստրէտի, Խիտցի, Բեչինգէնի շրջաններում։

Արտուայում մեր մարտկոցները մի քանի գնդակներ արձակեցին Բուալէօյում կայարանի վրայ՝ Արրասի հարաւում, որոնցից մի քանիսը կայարանի մօտով անցնող գնացքին դիպան։

Շամպայնում՝ գերմանական խրամատները Նավարինի ագարակի հիւսիսում ուժեղ ռմբակոծելիս՝ աւերեցինք թշնամու պատրաստած ամբողջ նիւթերը՝ խեղդող գազերի օգնութեամբ յարձակում գործելու համար։

ԳԵՐՄԱՆ-ԲԵԼԳԻԱԿԱՆ

ՀԱՒՐ. Դեկտ. 24-ին.—Դիկսմիւդի, Նորդշօտէի շրջաններում հրետանիական յամառ հրաձգութիւնը շարունակւում էր։

Մեր մարտկոցները յաջող կերպով գործեցին Իզէդէի շրջանում հաստատուած թշնամու ականաձիգների դէմ։

ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ

ԼՕՆԴՕՆ. Դեկտ. 25-ին. (Գլխաւոր շտաբից).—Դեկտեմբ. 23-ին մեր 13 աէրօպլանները արշաւանք գործեցին Լէնչերի մթերքների վրայ։ Սոմմի հիւսիսում մենք ցրիւ տուինք գերմանական պահակախմբերին, Հրետանին գործում էր Արմանտիերի և Իպրի արևելքում։ Պաշտօնապէս հաղորդում են, որ Տէն լճի մօտ գործող անգլիական արշաւախումբը դեկտ. 23-ին Մինգանի մօտ յարձակուեց գերմանական զինուած շոգենաւի վրայ՝ 10 րոպէի կռուից յետոյ ստիպելով նրան անձնատուր լինել։ Սպանուած են գերմանացի բոլոր սպաները։ Գերուած շոգենաւը նաւահանգիստ է բերուած»։

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

ՍԱԼՕՆԻԿ. Դեկտ. 24-ին.—Պետրոգ. գործ. Թղթակիցը անգլիական դիրքերն այցելելով՝ հնարաւորութիւն է ունեցել համոզուելու, որ անգլիական խրամատները ամրութիւնների մի հզօր ցանց են ներկայացնում իրենից, և միացած ֆրանսիական դիրքերի հետ, ամբողջ թերակղզու համար, սկսած Սալօնիկից մինչև Օրֆանեան ծովախորշը, յուսալի պատնէշ են կազմում։ Անգլիական դիմադրական կառուցուածքները զրահաւոր թագստոցներով են պատած, բազմաթիւ ծանր թնդանօթներ ունին և անընկճելի դժուարութիւններ են ստեղծում յարձակուող բանակի համար։

Այդ դիրքերի դիմադրական ընդունակութիւնը էլ աւելի ուժեղանում է Սալօնիկի ծոցում կանգնած թշնամու նաւատորմի ծանր հրետանիով։

Թշնամին դեռ առաջխաղացման փորձեր չի անում, այլ իր ուժերը կենտրոնացնում է Մօնաստիրի և Գևգէլիի միջև։

ԱԹԵՆՔ. Դեկտ. 24-ին.—Սալօնիկից հաղորդում են, որ Էլբասանի շրջակայքում երկրորդ օրն է, ինչ բուլղարների և սերբերի միջև յամառ կռիւ է բռնկուած։ Պօլսից հաղորդում են, որ դաշնակից նաւատորմը շարունակում է Դարդանէլի թիւրքական դիրքերի ռմբակոծումը։

ՍԱԼՕՆԻԿ. Դեկտ. 24-ին.—Սալօնիկի աւստրո-հունգարական հիւպատոսի բնակարանում կատարուած խուզարկութեան ժամանակ գտել են Մօնլիխեր մաուզերի 180 հրացաններ, թիւրքական 150 ատրճանակներ, 50 փամփուշտակալներ փամփուշտներով, 10 պայթուցիկ փամփուշտներ, մի կապոց անծանօթ պայթուցիկ նիւթ, 2000 կարմիր թևնոցներ և 50 մունդիրներ։

ՑԵՏԻՆԷ. Դեկտ. 14-ին.—«Մամուլի Բիւրօն» հաղորդում է. «Դեկտ. 18 ին ամբողջ արևելեան ճակատի վրայ հրետանու և հետևակային կատաղի կռիւներ տեղի ունեցան։ Թշնամու բոլոր յարձակումները յետ են մղուած։ Դեկտ. 22-ին հրետանու կռիւներ տեղի ունեցան ամբողջ հիւսիսային ճակատի վրայ։ Սանջակեան մեր բանակի ճակատի վրայ աւստրիացիները բոլոր ուղղութիւններով մեր դէմ յարձակում գործեցին, բայց յետ շպրտուեցին։ Մեր ճակատի միւս մասերում բացի հրետանու հրաձգութիւնից էական ոչինչ չէ կատարուել»։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ

(Պաշտօնական)

ՊԱՐԻԶ. Դեկտ. 24-ին.—Գիշերս հրետանու թոյլ հրաձգութիւն էր։ Արտուայում՝ Լիլի ճանապարհի շրջանում թշնամին երկու ական պայթեցրեց, բայց չկարողացաւ առաջացած խորութիւնը գրաւել։ Ուազի և Էնի միջև մենք թշնամու պահակները և խրամատները փորող գետնափորներն ռմբակոծեցինք։

ԻՏԱԼՕ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ

ՀՌՈՄ. Դեկտ. 24-ին. (Գլխաւոր շտաբից).—Մեր պահակները Աստեկօ հովտից դէպի Լուզերնօ ձգուող թեք լանջերի վրայ բարձրանալով՝ աւերեցին թշնամու թագստոցները։ Ֆէլլա Մալգօրժետտօ հովտում մեր ծանր թնդանօթները ոչնչացրին թշնամու երէկուայ մեր աւերած խրամատները վերականգնելու և հրետանի ամրացնելու աշխատանքները։

Թօլմինօի ձորում թշնամու մեր գծին մօտենալու յամառ փորձերն արագ յետ են մղուած։ Հրետանու ուժգին կռիւ տեղի ունեցաւ Պեւմայից մինչև ծովափ ճակատի վրայ։

Թշնամու աէրօպլաններն իրենց յաճախակի արշաւանքները շարունակում են Լագարին, Բիւգան, Դօզնա հովիտներում և վերին Իզօնզօի վրայ։ Ամեն տեղ թշնամու օդաչուներն ռումբեր են գցում, առանց որևէ վնաս պատճառելու մէջ։

ՆԵՐՔԻՆ

(Պաշտօնական)

ՊԵՏՐՕԳՐԱԴ. Դեկտ. 25-ին.—Լուսաւորութեան մինիստրի հրամանը—Թագաւոր Կայսրը, լուսաւորութեան մինիստրութեան իրաւասութեան տակ գտնուող տարրական դպրոցների ուսուցիչների և ուսուցչուհիների բարեկեցութեան նկատմամբ իր ունեցած կայսերական հոգածութեամբ՝ առանձին ուշադրութիւն դարձնելով նրանց վրայ, որոնց վրայ չեն տարածւում պետական գանձարանից քաղաքացիական վարչութեան ծառայողներին լրացուցիչ նպաստ տալու 1915 թ. մարտի 13-ի կանոնները, բարեհաճեց հրամայել ինձ, որ անյապաղ մինիստրների խորհրդին ներկայացնեմ ժողովրդական դպրոցի այդպիսի աշխատաւորներին սկսած 1-ից առանձին յաւելեալ վարձատրութիւն տալու առաջարկ, մինչև սահմանուած կարգով ժողովրդական դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիների նիւթական դրութիւնը կբարելաւուի։ Դրա համար անհրաժեշտ միջոցներն արդէն յատկացուած են։

Թագաւոր Կայսրի՝ տարրական դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիների նկատմամբ ցուցահանած խնամքի այս նոր ակտի մասին յայտարարում եմ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան։

Ստորագրեց ժող. լուս. մինիստ.՝
Կոմս Իգնատիեւ

ԼՐԱՏՈՒ

ԲԱԳՈՒ

◆ Փախստականների կոմիտէն որոշել է մօտ օրերս ընդհանուր ժողով գումարել և պարզել վաղօններ բաժանելու հարցը՝ պարենաւորման խորհրդակցութիւն կազմակերպելուց յետոյ։

◆ Նիստ.— Չորեքշաբթի, ամսի 23-ին, քաղաքային վարչութեան շինութեան մէջ կայացաւ դպրոցական նորակառոյց շէնքերի վրայ հսկող մասնաժողովի նիստը։

◆ Սպանութիւն.— Բ.-Մորսկայա փողոցում գտնուող «Բօրգօ» հիւրանոցում սպանուած է Խանում Իսմայիլ գըզի։ Սպանողները՝ սպանուածի կենակից Բահրամ Աթա օղլին և հարազատ եղբայր Ալի Աբասը ձերբակալուած են։

◆ Գողութիւն եւ Թունաւորում.— I Զերնօգօրօդսկայա փողոցում բնակուող Նեզօկեայ Վօլկովան յայտնել է ոստիկանութեանը, թէ իր քնած ժամանակ, փակ դռնից, գողացուած է 40 ր. արժեցող կանացի վերարկու։ Գողութեան մէջ կասկած է յայտնել իր ընկերուհու՝ Եկատերինա Վլասովայի վրայ, որը պատասխանատուութիւնից խոյս տալու համար որոշում է կեանքին վերջ տալ և այդ նպատակով ընդունում է քացախի էսսենցիա։ Նրա դրութիւնն անյուսալի է։

◆ Գողութիւն.— Չորրորդ Զավօկզալնայա փողոցում, № 3 տանը բնակուող Սիմէօն Իվանկովի բնակարանից, նրա բացակայութեան ժամանակ, կողպէքը կոտրելով՝ գողացուած է 191 ր. 70 կ. իրեր։ Գողը՝ Բաղրատ Ուրիդաշվիլին ձերբակալուած է։

ԹԻՖԼԻՍ

— Թիֆլիսի Հայոց Գիւղատնտեսական ընկերութեանը հաղորդում են Կարսի շրջանի Բաշքեօյ գիւղից, որ այնտեղ գիւղի երիտասարդների նախաձեռնութեամբ կենսամթերքների սարսափելի թանգութեան դէմ մաքառելու համար բացուել է սպառողական խանութ։ Ցանկալի է, որ միւս հայ գիւղերի երիտասարդները ևս աշխատէին բաց անել սպառողական խանութներ։

— Թիֆլիսի ոստիկանապետը կենսամթերքների սակագնի առաջիկայ բարձրացման մասին մի զեկուցում է ներկայացրել նահանգապետին, որով գտնում է, որ գոյութիւն ունեցող հացի սակագինը չի համապատասխանում իրականութեան։ Երրորդ տեսակի հացը սակագնից հանելով, ոստիկանապետի կարծիքով, քաղաքի ազգաբնակչութեան չքաւոր մասը տուժում է։ Շաքարի գնի աւելացումը հակառակ է երկրագործական գլխաւոր կառավարչի որոշումներին։ Ոստիկանապետը բանջարեղէնի սակագնի աւելացումն անհիմն, իսկ մսի գնի բարձրացումը անարդարացի է գտնում։

— Դեկտեմբերի 23-ին ասորիների պատրիարք Մար Շիմօն Բենիամինը ընդունեց Կովկասեան գաղթականական գործի գլխաւոր լիազօր գեներալ մայիոր Թամամշևին և նրա հետ ունեցաւ երկար զրոյց փախստական ասորիների վերաբերեալ գործերի մասին։

— Քաղաքների Միութեան Կովկասեան բաժանմունքի կոմիտէն իր հովանաւորութեան տակն է առել Թիֆլիսի շրջաններում գտնուած գաղթականների մէջ աշխատող 2 րդ սանիտարական խումբը։

— Քաղաքային պարենաւորման գործի մասին գումարուելիք ժողովին ներկայ լինելու համար, ներկայացուցիչներ են ընտրուած՝ համառուսական զեմստուային միութեան կողմից—Գ. Ֆ. Գօլիչայշվիլի, իսկ քաղաքային կոմիտէից—Ա. Ա. Էնֆիաճեան։

— Քաղաքային վարչութեան մէջ գաւառներից բազմաթիւ հեռագրեր են ստացւում, որոնցով խնդրում են, որ ալիւր փոխադրուի իրենց։ Մինչև այժմ այդպիսի խնդիրներ են ստացուել Ծալկից, Զաքաթալայից, Ախալքալաքից և Ղազախից (Գանձակի նահանգ)։ Բոլորի խնդիրներն էլ մերժուած են, որովհետև վարչութիւնը պահեստի ալիւր չունի։

ԿՈՎԿԱՍ

— Դաշ-Բուրուն.— Այս գիւղում ներկայումս պատսպարուած են 455 փախստականներ, իսկ Ալի-Ղըլը գիւղում՝ 400-ի չափ։ Երկու գիւղերումն էլ համաճարակ հիւանդութիւնները բոյն են դրել։ Դաշ-Բուրունում գոյութիւն ունեցող բժշկական կայանը վերջերս փակուել է՝ գիւղական բնակիչներին և գաղթականներին թողնելով հիւանդութեան ճիրաններում։

— Ալէքսանդրապօլ.—«Ալագեազի զաւակունք» միութեան նիւթական աջակցութեամբ և Ցեզար Նալեանի խմբագրութեամբ տեղումս յունուարից լոյս կը տեսնի ռուսերէն լեզուով «Наши Дни» օրաթերթը։

— Շուշի.—Գրադարանապետի մահուանից յետոյ, Բարեգործ. Ընկերութեան գրադարան-ընթերցարանը մինչև այսօր դեռ փակ է։ Շնորհիւ վարչութեան անփութութեան, ժամանակին չի հրաւիրուել նոր գրադարանապետ, որի պատճառով էլ ահա ամբողջ ամիս ու կէս է, ինչ ընթերցողների մի ստուար թիւ զուրկ է մնացել պարբերական թերթեր կարդալու հնարաւորութիւնից։

— Քաղաքում տարածուած է «կարմրուկ» հիւանդութիւնը, սակայն մահացութեան դէպքեր համարեա թէ չեն լինում։

— Կառավարութեան կողմից յայտարարուած է ձիերի մօբիլիզացիա։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԻՆՉԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՒՈՒՄ

Եկատերինօսլավում նահանգական զեմստվօն հրատարակում էր «Земская Газета», որի վճռական նշանաբանն էր՝ «Թերթ—առանց քաղաքականութեան»։

Եւ նրա ղեկավարները հաւատարիմ իրենց «սկզբունք»-ին, անշեղ յամառութեամբ տանում էին թերթը՝ լոյս ընծայելով այն շաբաթական երկու անգամ։

Գրում էին անմեղ յօդուածներ, խոտհարքի, կարտօֆիլի, անասնաբուծութեան, տպագրում էին գործակալութեան միանգամայն քաղաքական բարեյոյս հեռագիրները և այլն։

Իր այդ անքաղաքական քաղաքականութեան համար թերթը շատ յարձակումներ կրեց, շատ յանդիմանութիւններ լսեց, բայց անվրդովելի մնաց... մինչև դեկտ. 17-ը։

Այդ օրը, պատմական այդ 10-ամեակի առթիւ, անգոյն ու շաբլօն յօդուածների շարքում սպրդում է մի փոքրիկ անպաճոյճ յօդուած եւ՝ հոկտ. 17-ի մանիֆեստի արժէքի մասին...

Այդպիսի «ըմբոստութիւնը» չէր կարող անպատիժ մնալ և, ահա, խմբագրութեան ղեկավար Մամադիշևին և աշխատակից Օսիպովը ձերբակալւում և բանտարկւում են, թերթը փակւում է, պատասխանատու խմբագիր Դէսբերգը մայրաքաղաք է մեկնում՝ թերթի գործերով։

«Բնորոշ է այն—ասում է «Р. С.»— որ թերթի փակումը և նրա գլխին պայթած այդ ամբողջ փոթորիկը զուգադիպում է «սև-հարիւրակային» «Кіевъ»-ի աշխատակիցներից մէկի Եկատերինօսլաւ գալու հետ, որի նպատակն է «Голосъ Русскаго» աջակողմեան թերթ հիմնել»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՄԱՍ ՍԱԼՎԻՆԻ

86 տարեկան հասակում վախճանուեց աշխարհահռչակ արտիստ իտալացի Թոմաս Սալվինին։ Իր երկարամեայ բեմական գործունէութեան ընթացքում տաղանդով և բեմական արուեստի մէջ ունեցած իր հմտութեամբ նա ոչ միայն մեծ բազմութեամբ հասարակութիւն է ձգել դէպի գեղարուեստի դաները, այլև դաստիարակել է բեմական գործիչների սերունդներ։ Նա դերերի ուսումնասիրութեան և խաղի ամբողջ շկոլա է ստեղծել։ Եւ այդ ոչ միայն իր հայրենիքում, այլև բոլոր քաղաքակիրթ երկիրներում, Ռուսաստանում քիչ անգամներ չէ, որ նա բազմութեան ցոյցերի առարկայ է դարձել։

Հայ աչքի ընկնող դերասաններից ոմանք նոյնպէս նրա ազդեցութիւնն են կրել։ Իսկ Ադամեանի հետ Սալվինին, ինչպէս և Ռոսսին 19-րդ դարի նշանաւոր արտիստներն էին։

Շեքսպիրի, ինչպէս և բոլոր կլասիկ ստեղծագործութիւնների լաւագոյն արտայայտիչն էր Սալվինին։ Բնութիւնը տաղանդի հետ տուել էր նրան նաև արտաքին բոլոր բարեմասնութիւնները։ Մայրաքաղաքի թերթերը հիացմունքով են խօսում այդ բարեմասնութիւնների մասին։ Նրա հսկայատիպ հասակը միայն բաւական էր ահագին տպաւորութիւն անելու հանդիսականների վրայ։ Արտասովոր զարգացած ձայն ունէր, որ միատեսակ ուժգնութեամբ հնչել է բոլոր նօտաներում և իւրաքանչիւր բառ նրա ասածից լսելի է եղել ամենայն պարզութեամբ։

Իր բազմաթիւ ճամբորդութիւններն աշխարհի կուլտուրական կենտրոններում միշտ էլ առաջ է բերել հասարակական մեծ հետաքրքրութիւն և փոթորկալից ցոյցեր։ Այսօր ոչ միայն Իտալիան է կորցնում նշանաւոր Թոմաս Սալվինիին, այլ և ամբողջ գեղարուեստական աշխարհը։

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Խօսելով Չինաստանում տեղի ունեցող վերջին դէպքերի, պետական յեղաշրջման և ներքին յուզումների մասին՝ «Рѣчь»-ը գրում է.—

Եթէ հանրապետականներն առժամանակ կարողանում էին հաշտուել նախագահի կողմից երկրի սահմանադրութեան նկատմամբ կատարած փորձերի հետ, նրանք չէին կարող լուռ մնալ հանրապետութեան վերացման հանդէպ և դուրս չգալ սպասողական դրութիւնից։

Թերևս նրանք հակուած լինէին դարձեալ սպասելու, բայց Չինաստանում անսպասելիօրէն զարգացած դէպքերը հարկադրեցին նրանց իրենց անելիքը որոշել։

Անհամբեր Հարաւը խոյոյն արձագանք տուեց Պեկինի անցքերին։ Կանտօնում, Շանխայում և այլ վայրերում յեղափոխական կրակը բռնկուեց և դրանից անմիջապէս յետոյ՝ Իւնանի շրջանն անջատուեց Իւանշիկայի միապետութիւնից և իրեն անկախ յայտարարեց։ Հինաւուրց պետութեան յեղափոխական հրաբուղխը՝ հարաւային Չինաստանը կրկին կենդանացաւ։

Իւանշիկայը հապճեպով իր զօրքերն ուղղեց այնտեղ, բայց հազիւ թէ նրան յաջողուի բորբոքուող հրդեհը իր սաղմում հանգցնել։

Միապետութեան վերականգնումը, Իւանշիկային կայսր հրատարակելը խախտում է Չին հասարակութեան այլազան խաւերի շահերը։

Յեղափոխական ալիքի առաջ փախուստ տուած միապետականները չէին մեռել, այլ թաքնուել էին գետնափորերում և սատրճանաբար, Իւանշիկայի հեռաւոր ձգտումների դրսևորման հետ միասին նրանք սկսել էին դուրս գալ իրենց թագստոցներից։ Բայց միշտ էլ նրանք պարզ կերպով խուսափում էին Նախագահ Իւանշիկայից։ Նրանցից ոմանք Մանջուրեան տան վերականգնումն էին ցանկանում, ուրիշները՝ Չինական տան։ Բայց թէ մէկը և թէ միւսը լսել անգամ չէին ուզում, որ Չինական միապետութեան գլուխ կանգնէր Նախագահ Իւանշիկայը։

Իւանշիկային կայսր հրատարակելը նրանց կըդրդի հանրապետականների հետ ձեռք-ձեռքի տուած կռուել ընդհանուր թշնամու՝ նոր կայսրի դէմ։

Այդպիսով յեղափոխական հարաւի հետ միասին միապետական հիւսիսն էլ սառնարիւն չի մնալ կատարուած յեղաշրջման հանդէպ։

Իւանշիկայը հանրապետականների դէմ իր մղած կռւում բացառապէս իր սուինների և արտասահմանեան ոսկու ուժին չէր յենուել։ Նա միշտ աշխատել է իր շուրջը համախմբել պահպանողական և չափաւոր տարրերը։

Յեղափոխութիւնից սարսափած չափաւորները և աջակողմեանները Իւանշիկային յարեցին, «Կարգի կուսակցութիւն» կազմեցին, բայց նրանք նախագահի հետ մինչև վերջը գնալուն համաձայն չէին։

Երկրորդ յեղափոխութիւնը ճնշելուց յետոյ՝ այդ տարրերը հեռացան նըրանից։

Նոր կայսրը կարող է յենուել չինական հասարակութեան պահպանողական աննշան մասի և բանակի վըրայ միայն, որը, փորձը ցոյց է տըւել, հաւատարիմ կըմնայ այնքան ժամանակ, որքան Իւանշիկայը կարող կըլինի նրանց վարձատրել։ Իրեն կայսր յայտարարելու առաջարկից անմիջապէս յետոյ՝ Իւանշիկայը իր ... է հրաւիրում սահմանադիր-միապետականների պարագլուխ Կանի-Վէյին և խնդրում է աջակցել իրեն՝ սահմանադիր-միապետական կարգ հաստատելու գործում։

Այդպիսով՝ այժմ Իւանշիկայ կայսրի դրութիւնը աւելի ծանր է, քան Իւանշիկայ նախագահի դրութիւնը երկրորդ յեղափոխութեան ժամանակ, և նրա յաջողութիւնն այժմ պայմանաւորուած է նրանով, թէ ինչ դիրք կըբռնեն շահագրգռուած օտար պետութիւնները։

Առանց դրսի օգնութեան՝ Իւանշիկայը հազիւ թէ կարողանայ դիմադրաւել բարձրացող յեղափոխական ալիքին։

ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ՀԱՐՑ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Լվովի փոխարքայ կոմս Պօտօցկու սպանութեան համար դատապարտուած Միրօսլաւ Սիչինսկին, որ բանտից փախչելով այժմ Ամերիկայում է ապրում, միջնորդութիւն է յարուցել, որ Ամերիկայում իր գործը երկրորդ անգամ քննութեան դրուի։ Ամերիկական օրէնքով՝ հայրենիքում բանտարկութեան դատապարտուած անձնաւորութիւնն Ամերիկայում ապրելու իրաւունք չունի։

Այդ ի նկատի առնելով՝ Սիչինսկին միջնորդել է, որ իր հարցը քննեն և իրեն ամերիկական քաղաքացի ընդունեն։

Ամերիկական «New-York-Times»-ը բացատրում է, որ ներկայ խնդրում կենտրոնական հարցն այն է, թէ քաղաքական յանցաւորին յետ պահանջելու իրաւունք ունեցող պետութիւնից փախած անձնաւորութիւնը կարող է, արդեօք, Մ.-Նահանգների քաղաքացի դառնալ։

Այդ հարցը պիտի վճռի դաշնակցական դատարանը։ Սիչինսկին երկու անգամ արդէն հարցաքննուած է։ Առաջին անգամ սեպտ. 27-ին էմիգրանտների գործերը վարող մի հիմնարկութեան կողմից և դրանից մի շաբաթ անց՝ երկրորդ անգամ։

Գործի սկզբունքային բնոյթը մեծ հետաքրքրութիւն է առաջ բերել ամբողջ ամերիկական մամուլի մէջ։

Շուէյցարիայի 1916 թուի Դաշնակցական Խորհրդի նոր նախագահ Կամիլլ Դեկօպպէն, որ ընտրուեց խորհրդի 188 ձայնից 185-ով, Վօ կանտօնից է։ Այնտեղ նա յաջորդաբար վարել է գլխաւոր դատախազի, մեծ խորհրդի և վերահսկող կառավարութեան անդամի պաշտօնները։ 1912 թուին նա ընտրուեց Դաշնակցական Խորհրդի անդամ։ Նա պատկանում է արմատական դէմօկրատ կուսակցութեան։ Ներկայումս նա 53 տարեկան է և Դաշնակցական Խորհրդի զինուորական դեպարտամէնտի գլխաւոր։

ԳԱՒԱՌԻ ԿԵԱՆՔ

ՄԱԴՐԱՍԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Մադրասա, 22 դեկտեմբ.

Մադրասային սպառնացող տնտեսական ճգնաժամը, որի անխուսափելիութեան մասին յօդուածներ լոյս տեսան «Արևի» ամառուայ մի երկու համարում, այժմ եկել-չոքել է գիւղացիների դռան առջև։ Նորից չկրկնելու համար ներկայ դրութեան պատճառները, ամփոփում ենք, որ 1914 թուին չնչին բերք տուող այգիներն այս տարի խոնաւութիւնից առաջացած հիւանդութեան և կարկտի հետևանքով ոչինչ չտուին։ Ցորենի մասին խօսք չէ կարող լինել, որովհետև մադրասեցու համար դրսից է ներմուծւում։ Եթէ աւելացնենք պատերազմի դաշտում գտնուող մօտ 600 աշխատող ձեռների բացակայութիւնը, որոնք գիւղի օգնութեան կարիքն ունին, ապա հասկանալի կըլինի, թէ ինչ օրեր է ապրում Մադրասան։ Ի՞նչ անել, ում դուռը ծեծել. ահա հարցեր, որ իրենց պատասխանը պահանջում են քաղաքներում ապրող բարեկեցիկ մադրասեցիներից։

Սրանցից բազուերնակների մի խումբ՝ անշուշտ ամենալաւ ցանկութիւններով 1906 թուից նախաձեռնութիւն է յանձն առել առաջ բերելու «Մադրասա գիւղի հասարակութեան խնայողական ընկերութիւն» անունով մի ձեռնարկութիւն, որի նպատակներն են՝ «բանալ աժան վարկ գիւղացիների համար, նուազագոյն գներով մթերք, հայթհայթել մատակարարել գիւղին, էժան գներով ձեռք բերել գործիքներ, կենդանիներ»։

Չակերտների մէջ առած կէտերը քաղում ենք «Նախագիծ կանոնադրութեան» բրօշիւրից՝ տպուած 1906 թուին, որի մէջ ասուած է նաև, որ գործունէութեան վայրը գիւղն է լինելու, իսկ գործի ղեկավարութիւնը Բագւում է։ Միջոցներն են՝ միանուագ անդամակցական վճարներ, ամսավճարներ, նուէրներ և երեկոյթներից ստացուած արդիւնքներ։ Այս վերջին միջոցը պատերազմից երկու տարի առաջ տարէնը մի անգամ սովորաբար գլուխ էր գալիս «Մադրասեցիների երեկոյթ» անունով։

Այսպիսի ըստ երևոյթին գեղեցիկ մտադրութիւններով և ծրագիրներով զինուած ընկերութիւնը մօտ տասնամեայ կեանքով պէտք է շօշափելի արդիւնք ցոյց տուած լինէր, իսկ այժմ կարիքի ամենից նեղ օրերին երևան գար կրկնապատկուած գործունէութեամբ։ Ընդհակառակը, վարչութիւնը ոչինչ չանելով գիւղացիների օգտին, իր անդամներից մի քանիսի համար ընկերութեան դրամագլխով մեծ գործ է տեսել. տարիների ընթացքում դիզուած գումարը, որ այժմ մի քանի հազարների է հասնում, գործ դրուելով սրա ու նրա ձեռնարկութեան մէջ, մոռացութեան է տրուել ծրագրի կէտերը։ Հետևողական լինելու, այլ և սրանց դատապարտելի ընթացքը ցուցադրելու համար, որ սկիզբն է առել ընկերութեան հէնց գոյութեան առաջին օրերից, մենք այսօր հրապարակով շատ աննշան գործ ենք համարում մի քանի տարի առաջ գիւղացիների համար համեմատաբար էժան գնով ի վաճառ բերած Ռուսաստանի ալիւրը. որովհետև ժիր մադրասեցին նախ՝ այն օրերում դժուարութիւն չունէր ալիւր գտնելու իր ընտանիքի համար, երկրորդ՝ այդ ալիւրի չվճարումից վարչութեան գիւղի անդամները եկամուտի աղբիւր չպիտի ունենային։

Աննշան գործ ենք համարում նոյնպէս 1913 թուից գիւղում բաց արած «Սպառողական» անունը կրող դրանց ողորմելի խանութը, որ աննկելի շահատակութեան վայր լինելով միայն շաքար, թէյ, ալիւր էր վաճառում չնչին չափերով, և որ անդարձ փակուեց կասկածելի պատճառներով։ Այս հիմնարկութիւնն «սպառողական» անունը շահագործելով և չտարբերուելով գիւղում եղած բազմաթիւ մանուր խանութներից, արգելք է հանդիսացել իսկական կօօպերատիւ հիմունքներով սպառողական խանութ բանալուն, որի նմանները արդիւնաւոր գործունէութիւն ունին Մադրասայից հինգ-վեց անգամ փոքր Սաղեան և Զարգարան գիւղերում։

Պարզ է, որ եթէ այդ ընկերութեան հիմնադիրները սրտացաւ մարդիկ լինէին, անկեղծօրէն գործին փարած, պէտք է վերջ դնէին նման գործելակերպին, հեռացնէին զեղծարարներին, ցրուած դրամները ի մի հաւաքէին, իսկական կօօպերատիւ հիմունքներով խանութ բանային, հրաւիրէին գիւղացիներին մասնակցելու իրենց բաժնեվճարներով, մրցէին գիւղը կեղեքող չարչիների հետ՝ ամեն տեսակի էժան ու լաւ ապրանք մատակարարելով. պէտք է գիւղում արջասպի, ծծումբի և այլ դեղերի շտեմարան պահէին, որ գիւղացիք ժամանակին այգիները սրսկել կարողանան։ Չէ որ այս տարուայ անբերրիութիւնը մասամբ և արջասպ չսրսկելուն է բացատրւում. ապացոյց թող լինին սակաւաթիւ հեռատեսների այգիները. սրանք ժամանակին սըրսկելով՝ վտանգից ազատուեցին և քիչ ու շատ բերք տուին։

Ցաւել պէտք է, որ արջասպ ունեցողներից շատերն էլ գիւղի մի քանի շահախնդիր մարդկանց հրապուրիչ առաջարկներին զոհ գնալով տուել են եղածը, որ վերջիններս Գանձակում աւելի թանգ գնով ծախեն իրենց գըրպանի օգտին. մինչդեռ ընկերութիւնը, եթէ փոքր ինչ սրտացաւութիւն ունենար, արջասպի խնդիրը գոնէ առաջին հոգսը կը համարէր, որովհետև նրա ծրագրի մէջ մտնում է «գործիքներ մատակարարել գիւղացիներին», և սրանից յետոյ արջասպ ձեռք բերելը լինելու է թանգ ու դժուար, եթէ չասեմ անկարելի։ Թէև այս ծրագրի կէտերից դուրս էլ՝ փոքր ինչ անկեղծ վերաբերմունք տածելով, վարչութեանը հեշտութեամբ կը յաջողուէր պատերազմից առաջ օտարագործել գիւղացիների մէջ բարձրացած տրամադրութիւնը— վերջնական լուծում տալու համար բժշկի, պօստային բաժանմունքի, մեծերի համար գործնական գինեգործական և այգեգործական աշխատանքի, ուսումը գիւղում ընդհանրացնելու, մաքուր ջուր մատակարարելու խնդիրներին։

Բայց ինչ կարելի է սպասել նրանից, երբ գիւղի վարկային ընկերութեան բանկն անգամ այս նեղ օրերին մտնելով գիւղացիների դրութեան մէջ, շատերի մուրհակները նորոգում, միայն տոկոսը վերցնում, պահանջը յետաձգում է, իսկ «խնայողականի» վարիչները հանդէս չեն գալիս, գոնէ պատրաստի դրամը չեն միացնում գիւղացիների հանգանակած գումարին, որով վերջինները միտք ունին Ռուսաստանից ցորեն բերելու Թիֆլիսի կամ Բագուի յանձնաժողովների ձեռներէցութեամբ։

Եւ որովհետև գիւղացիք արդէն դիմումներ են արել խնայողական ընկերութեան վարիչներին, մենք եւս կը սպասենք նրանց դրական պատասխանին՝ հաւատալով, որ այս անգամ յուսախաբ չեն թողնի անճարներին։ Համարելով այս դիմումը առ այժմ միակ միջամտութիւնը հանդամանք գիւղի տագնապի, մենք նրանց լռութեան կամ բացասական պատասխան տալու դէպքում, մեր բարոյական և քաղաքացիական պարտքը կը համարենք «Արևի» մէջ մէկ-մէկ տալ այդ պարոնների անունները և նրանց մօտ եղած դրամների քանակը։

Մադրասեցի

Թատրոն և Երաժշտութիւն

ՕՊԵՐԵՏՏԱ ԱՄԻՐԱԳՕՒ

Այսօր, կիրակի, երեկոյեան եղբայրք Մայիլեանների թատրոնում յայտնի Թամարա Դրուզինսկայայի մասնակցութեամբ կը ներկայացուի Ս. Լեգարի նշանաւոր «Կոմս Լիւքսենբուրգ» օպերետտը։ Ժիւլետտայի դերը կը կատարէ Թամարա Դրուզինսկայան, իսկ կոմս Լիւքսենբուրգի դերը՝ Լ. Միրանեանը։ Վերջում կըլինի շքեղ դիմակահանդէս։ Սկիզբը երեկ. ժամը 8 և կէսին։

Այսօր ցերեկով նոյն խումբը կըխաղայ մանկական յայտնի ռուսական հէքիաթը —«Ստեփան-Թաիֆթիան»։ Սկիզբը ցերեկուայ ժամը 1-ին։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

— Դաշնակիցների նաւատորմիղը եռանդուն կերպով ռմբակոծում է բելգիական ափերի գերմանական ամրութիւնները։ Գերմանական հրետանին զօրեղացել է Նիւպօրտի մօտ։

— Յունական կառավարութիւնը Քառեակ Համաձայնութեան պետութիւններից 40 միլիոն փոխառութիւն է խնդրել։

— Սալօնիկի պաշտպանութեանը մասնակցում են 15,000 յոյն բանուորներ։

— Դաշնակիցներն արդէն Սալօնիկ են հասցրել 1000 հեռաձիգ թնդանօթներ։

— Յունական կառավարութիւնը յայտարարել է, որ Սալօնիկի գրաւման կռուի ժամանակ յունական զօրքերը դիտողի դերից դուրս չեն գալ։

— «Պարսկաստան» շոգենաւի խորտակման պատճառով ամերիկական մամուլը պահանջում է Աւստրիայի հետ խզել դիւանագիտական յարաբերութիւնները։

— «Daily Mail»-ին հեռագրում են, որ Սերբիայից հեռացած գերմանական զօրքերի զգալի մասը հասել է Վառնա։ Հաւանօրէն գերմանական սպաների մի մասը կուղարկուեն Պոլիս և Սիրիա։

— «Journal des Balcans„-ը հաղորդում է, որ Մակենզէնի գլխաւոր շտաբը ներկայացումս գտնւում է Զուչկում և Բուկովինայում։

— Բուլղարական զօրքերից ներկայումս Ալբանիա են հասել մօտ 30,000 հոգի։

— Նախագծւում է անապաստան սերբերի մի խոշոր մասն ուղարկել Կիպրոս և Սիցիլիա կըղզիները։

— Վենիզելոսականների օրգան «Nea Elans»-ը յայտարարում է, որ Սալօնիկը Գերմանիայի և իր դաշնակիցների ձեռքն անցնելուց յետոյ այլ ևս չի վերադարձուի յոյներին. այդ պատճառով էլ անհրաժեշտ է միանալ դաշնակիցներին։

— Իտալիա է ժամանել սերբիական Պետր թագաւորը։

— Կոստրոմայում նահանգապետն արգելել է պատգամաւոր Չերնօսվիտովին դասախօսութիւն կարդալ «Հասարակականութեան խնդիրները» նիւթի մասին։

— Կիևի գիմնազիային թոյլ է տրուած Սարատովից կրկին վերադառնալ։

— Ներքին գործերի մինիստրի օգնական Պլէվէն հեռագրով յայտնում է Տամբովի նահանգապետին, որ հրէայ-փախստականներին նոյնպէս միւսների հաւասար պետական նպաստ պէտք է տալ։

— Իշխ. Ուրուսովը Պետրօգրադի թերթերին առաջարկում է խոյոյն միջոցներ ձեռք առնել թուղթը խնայելու համար, որովհետև Ֆինլանդիայից դժուար է թուղթ ստանալը։ Նա խորհուրդ է տալիս կրճատել թերթերի ծաւալը, յաւելուածները վերացնել և աւելի մանր տառերով տպել։

Խմբագիր՝ ԱՐԱՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ
Редакторъ АРАМЪ АРАКЕЛЯНЪ

Печатать дозволено военной цензурой.

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Բագուից—Թիֆլիս

Մեկնում է

Գնացք № 5 արագ. առ. ժ. 7—31 ր.
» № 3 փոստ. ցեր. ժ. 3—28 ր.
» № 7 մարդ. եր. ժ. 12—23 ր.

Թիֆլիսից—Բագու

Համնում է

Գնացք № 6 արագ. գիշ. ժ. 11—10 ր.
» № 4 փոստ. ցեր. ժ. 3—42 ր.
» № 8 մարդ. առ. ժ. 8—16 ր.

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Բագուից—Ռօստով

Մեկնում է

Գնացք № 1 արագ. գիշ. ժ. 12—48 ր.
» № 3 փոստ. ցեր. ժ. 1—48 ր.
» № 3 բիս. մրդ. առ. ժ. 11—48 ր.

Մինչեւ հանքային Ջրեր գնում է.—

Գնացք № 7 մարդ. առ. ժ. 7—18 ր.
» № 11 մարդ. առ. ժ. 7—28 ր.
» № 21 ապ.-մար. առ. ժ. 5—38 ր.

Ռօստովից—Բագու

Համնում է

Գնացք № 2 արագ առ. ժ. 7—18 ր.
» № 4 փոստ. առ. ժ. 5—18

Հանքային Ջրերից

Համնում է

Գնացք № 4 բիս.-մարդ.-առ. ժ. 7—36
» № 8 մարդ. երեկ. ժ. 11—08
» № 12 մարդ. գիշ. ժ. 1—13
» № 22 ապ.-մրդ. գիշ. ժ. 1—55

Ժամերը նշանակուած են տեղակ. ժամանակով։

Հրատարակ. «ԱՆԹԱՌԱՄ» Ընկերութ.
Тип. Н. А. Ериванцова. Баку, тел. 44-10. Въ этомъ номерѣ четыре страницы
Издательство Т-ва на вѣрѣ „АНТАРАМЪ.“